Թ. ՏԱՐԻ 2641 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 3 ՏԻՊ 4385 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1892 4 ՃԼԻՊԱՁԻԼ ԷՎՎԷԼ 1340 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՈՒՆԵՒԻՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعلیه ده‌ره‌لك غزه‌تسی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳՐԻՆ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	150
» »	Վեցամեայ	75
» »	Եռամսեայ	40
Օտար երկիրներէ	Տարեկան Ֆրանկ	56
» »	Վեցամեայ »	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր.	Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ	Ղրուշ	50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՆՈՅԵՄ. 11/23 1892

ԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

Գ.

ԳՐԱԲԱՐԻ ՀԵՏՔԵՐԸ
Կ. ՊՈԼՍՈՅ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՆ ՄԷՋ

Մեր պատուական քարեկամն անուանց հոլովներուն և հոլովակերտ նախդիրներուն իսպառ արտաքսումը կը պահանջէ մեր արդի լեզուին մէջէն՝ իբրեւ դրաբառի չարաշուք մնացորդ։

Առաջինն սկսած է փառաւոր կերպիւ, ինչպէս ցոյց տուինք։ Իսկ երկրորդին հարկ չէ մնացած, վասն զի հագիւ կը գործածուին հոլովակերտ նախդիրք՝ մասնաւորապէս իմաստի շըփոթութեան և չարաձայնութեան առաջն առնելու համար, ինչպէս անուանց տէր բային ու խնդիրն և դերանուանց ոմանց վերջաւորով տրականներն ու հայցականներն իրարմէ զանազանել հարկ եղած ժամանակ։ Բայց ասոր ալ ճարը գտած են մասամբ նոր գրիչներէ ոմանք, այն է ֆրանսերէնի անխախտ կանոնին հետեւիլ։ Նախ տէր բային, յետոյ բայն և ապա խնդիրը գրել։ յարաբերեան ալ անպատճառ բայէն եւրը դնելով՝ յարաբերականին կցել։ Անգամ մը որ այս կանոնը մեր մէջ ալ հաստատուի, նախդիրի գրելիք պէտք չմնար։ բայց մեր լեզուին նոյն իսկ աշխարհաբարին ոգին կ'ընդունի զայդ։ փոյթ չէ։ պէտք է «ռամկայնութեան» լեզուն, արմինքն գրաբարէն անպատճառ տարբեր բան մ'ընել, իւր ասայուածոց ձեւերուն պէսպիսութիւնն և բառերու շարադասութեան ազատութիւնն, որ մեր լեզուին գլխաւոր գեղեցկութիւններէն մին է, մինչեւ իսկ փառքն է, խափանել, վերցուցեալ, և մեր արդի լեզուն բոլորովին անհամ, ազքատ և լղճուկ վիճակի մը մէջ դնել։ Եւ այս ամենը՝ մի միայն գրաբառ լեզուին հետքը չնչելու համար մեր արդի լեզուին մէջէն, փոյթ չէ որ ընթերցող ժողովուրդն արդէն սկսած լինի հանկնալ այդ գրաբառ ձեւերն ու բառեր, շնորհիւ դպրոցներու, լրագրերու, հանդէսներու և գիրքերու։ փոյթ չէ որ նոյն իսկ գաւառաբարբառներուն մէջ գտնուին գրաբառի այդ հետքեր։

Բարդութեանց և ածանցներու կանոններն ալ դիւրութեամբ ուսանելու միջոցը գտած է մեր քարեկամն։ «Այսուհետեւ բնաւ պէտք չմնար, կ'ըսէ, գրաբառին խորերը մտնելու։ Աշխարհաբարի քերականութեանց (այսինքն՝ նախակրթարանաց երկրորդ տարւոյն և ութ—ինն տարեկան մանկանց համար պատրաստուած աշխարհաբարի քերականութեանց) «մէջ ամիսոի և համատարածի կերպիւ աւանդեալ կանոնները» լեզուն, արմինքն գրաբառէն անպատճառ տարբեր բան մ'ընել, իւր ասայուածոց ձեւերուն պէսպիսութիւնն և բառերու շարադասութեան ազատութիւնն, որ մեր լեզուին գլխաւոր գեղեցկութիւններէն մին է, մինչեւ իսկ փառքն է, խափանել, վերցուցեալ, և մեր արդի լեզուն բոլորովին անհամ, ազքատ և լղճուկ վիճակի մը մէջ դնել։ Եւ այս ամենը՝ մի միայն գրաբառ լեզուին հետքը չնչելու համար մեր արդի լեզուին մէջէն, փոյթ չէ որ ընթերցող ժողովուրդն արդէն սկսած լինի հանկնալ այդ գրաբառ ձեւերն ու բառեր, շնորհիւ դպրոցներու; լրագրերու, հանդէսներու և գիրքերու։ փոյթ չէ որ նոյն իսկ գաւառաբարբառներուն մէջ գտնուին գրաբառի այդ հետքեր։

Բարդութեանց և ածանցներու կանոններն ալ դիւրութեամբ ուսանելու միջոցը գտած է մեր քարեկամն։ «Այսուհետեւ բնաւ պէտք չմնար, կ'ըսէ, գրաբառին խորերը մտնելու։ Աշխարհաբարի քերականութեանց (այսինքն՝ նախակրթարանաց երկրորդ տարւոյն և ութ—ինն տարեկան մանկանց համար պատրաստուած աշխարհաբարի քերականութեանց) «մէջ ամիսոի և համատարածի կերպիւ աւանդեալ կանոնները» լեզուն

մանակէ մ'ի վեր գրական հրապարակին վրայ տեսնուած այլանդակ բարդութիւնք ոչ եւս յերեւան պիտի գան։

Սոյն բարեպատեհ առթիւ՝ մեր բարեկամը կը յօժարի հաստատել թէ մեր արդի լեզուին մէջ գործածուած ածանցման ձեւերն ու բառերը ֆոլոկլոր անկախ են գրաբառէն՝ թէ բառերու հաւաքածոյին մէջ առաջին տեղը կը բռնեն ժողովրդին գործածած բառերը, թէ աշխարհաբառն ալ ունի իրեն յատուկ «ածանցման ձեւեր գրաբառինէն տարբեր (1), զորոնք մերժել չատ ուշ է թերեւս։ Օրինակի համար՝ երջանիկ, արդանիկ, գեղանիկ, մանանիկ և դեռ ուրիշներ։»

Բայց մեր բարեկամին ցուցած այդ ածանցի ձեւն ոչ թէ երջանիկ պարբերէ և գեղանիկ գոյականին յատուկ, այլ գրաբառին յատուկ է սուաւելագէս։ հին լեզուին մէջ ալ կայ, և անկէ աշխարհաբառին անցած, ինչպէս՝ անձկանի, արիւնանի, բժանի, բորանի, երկնչանի, զայրացկանի, լուսանի, ծականի, ծնունդանի, կնքիանի, մեռանի, մոռացկանի, յաւակնանի, ջերմանի, սողոսկանի, վաղվաղկանի, վաւաշանի, վերնանի, տրտփանի, ցաւանի, փութանի և այլք բազմաթիւ, որք՝ առանց շատ ուշ մնալու՝ կը ցրեն իւր այդ վճռական վարդապետութիւնը։

Աւասիկ նմանօրինակ վճիռ մ'ալ։

«Ցայսմանի է թէ, կ'ըսէ, չատ գրաբառ բառեր աշխարհաբառի մէջ էր։ «բեմն առանց փոփոխութեան և երբեմն դոյզն փոփոխութեամբ ձեւի՝ «Դեղագիտ է հոգ ի լինչ է հարբ։ օրինակի «համար՝ շուտ, ինքնաբ, լաւագոյն, ուրեմն «(սովրիլ) հանդիպ, յեղեալ և այլն։»

Ուրիշներ եթէ կան՝ չեմ ցիչեր, բայց մեր բարեկամին ցոյց տուած այս բառերը՝ բաց ի մէկէն՝ (2) փոքրագոյն իսկ փոխած չեն իրենց իմաստը։ Նոյն իմաստն ունին աշխարհաբառին մէջ ինչ որ ունին գրաբառին մէջ։ միայն թէ՝ գրաբառին մէջ ընդհանրապէս աւելի ընդարձակ իմաստ, այսինքն քանի մը նշանակութիւն ունին, իսկ աշխարհաբառին մէջ անոնցմէ մին կամ երկուքը միայն։

Ներքեւ խնդրելով ընթերցողներէն հաստատենք մեր ըսածը։

* * *

ԳԻՏԱՆԻ ԲԱՌԱԶՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ՇԱՏ։ Առաջին նշանակութիւնն է բացումն։ Այս իմաստով սովորաբար կը գործածուի գրաբառի մէջ, ինչպէս աշխարհաբառի։

Օրինակք ի նախնեաց։

«Ոչ եւս այլ չատ խօսեցայց ընդ ձեզ։

«Այրին տնանդեալ չատ արկ քանի զաւեանեանն։

«Որում չատ Թողուցաւ՝ չատ սիրէ, և որում չատ տրուեալ՝ չատ։

«Մի՛ չատախօս լինիք երբեւ զհեթանոսսն։»

Սոյն իմաստն ունին չատակեր, չատակեաց, չատահանճար, արդիւնաչատ մարդ չատ և այլք։

Երկրորդաբար կը նշանակէ «բաւական»։ օրինակք։

«Շատ է աւուրն չար իւր։

«Ոչ լցաւ ասել չատ։»

Շատանալ բայն, որ գրաբառի մէջ թէ՝ բազմանալ կը նշանակէ և թէ՝ բաւականանալ, գրական աշխարհաբառի մէջ բաւականանալու իմաստով միայն կը գործածուի, իսկ բազմանալ նշանակելու համար չատանալ՝ կ'ընէ աշխարհաբառը։

ԽՆԴԱԼ. Մէկ նշանակութիւն ունի գրաբառի մէջ՝ այն է ուրախանալ։

«Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։

«Վայ ընդ լացողս, խնդալ ընդ խնդացողս։»

Աշխարհաբառի մէջ ծիծաղիլ կը նշանակէ, բայց գրաբառին իմաստովն ալ կը գործածուի, մասնաւորապէս ընտանեկան խօսակցութեանց մէջ։ Օրինակք։

«Դիտքախտ մարդը (կամ կինը) չկրցաւ խնդալ (ուրախանալ) իւր զաւկին յաջողութեանցը վրայ։

«Խեղճին խնդալը (ուրախութիւնը) փոքրը մնաց։

«Այս բարեկենդանին չկրցինք խնդալ (ուրախութիւն) ընել։»

ՎԱՍՏԱԿԻՒ. Երկու իմաստ ունի գրաբառի մէջ։ առաջինը կը նշանակէ յոգնիլ աշխատելով, երկրորդը՝ չահ կամ ապրուստ հայթայթել աշխատութեամբ։ Օրինակք։

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք։

«Պատուեա զտէր քո ի բոց արդար վաստակոյ։

«Վաստակէր նա իւրով արուեստիւ աւուրն դրամս գանկի միոյ։»

Աշխարհաբառի մէջ սովորաբար երկրորդ նշանակութեամբ կը գործածուի։ բայց երբեմն ալ առաջին նշանակութեամբ, մանաւանդ բարդութեանց մէջ։ Օրինակք։

«Բազմավաստակ, յոգնավաստակ, անվաստակ։

«Զուր չան, անօգուտ վաստակ (3)։»

ՍՈՎՐԻԼ (սովորիլ)։ Երկու իմաստ ունի։ առաջինն է վարժուիլ, ընդելանալ, երկրորդն՝ ուսանիլ։ Օրինակք։

«Սովորեցան ընդ բանս նախատանաց։

«Մանակ տակաւ սովորին զծու�ուիւն։»

Աշխարհաբառի մէջ երկրորդ նշանակութեամբ կը գործածուի։ բայց արմատէն կազմուած քանի մը բառեր կան։ սովորութիւն, սովորոյթ, սովորական, անսովոր և այլք, որք աշխարհաբառի մէջ ալ կը գործածուին առաջին նշանակութեամբ։

ՀԱՒԱՆԻԼ (հաւանիլ)։ Երկու իմաստ ունի գրաբառի մէջ։ առաջինը հաճիլ, համոզուիլ, անսալ։ երկրորդն պարծիլ բան մը, սիրտը սիրել, ընտրել կը նշանակէ։

«Հաւանեցան բանից նորա։

«Հաւանեցաւ ընդ գեղեցկութիւնն նորա։»

Աշխարհաբառի մէջ երկրորդ նշանակութեամբ կը գործածուի սովորաբար։ Բայց կան արմատէն կազմուած քանի մը բառեր. հաւանական, հաւանելի, հաւանաբար, հաւանութիւն, որք առաջին իմաստն ունին և աշխարհաբառի մէջ ալ կը գործածուին։

ԶԳԵԼ։ Քանի մը նշանակութիւն ունի գրաբառի մէջ։ գլխաւորապէս նեսել, քաշել, երկնցուցեալ, արկանել կամ ընկենուլ։

«Զգէին նեսս և քարինս։

«Զգեցին զգործին ի ցամաք։

«Զգեաց զձեռն իւր։

«Կամէր ձգել զնա ի խորխորատ։ Ընդեաց զանձն ի խոնարհ։»

Աշխարհաբառի մէջ սովորաբար վերջին նշանակութեամբ կը գործածուի։ Ձեռքէն ձգեց։ երեսէ ձգեց։ պաշտօնէ ձգուեցաւ։ Բայց արմատէն կազմուած բարդ և ածանցեալ բառեր առաջին և երկրորդ նշանակութեամբ ալ կը գործածուին աշխարհաբառի մէջ։ Ռմբաձիգ, թնդանօթաձիգ, նետաձիգ, նաւաձիգ, ձգողութիւն։

* * *

ՎԵՐՋԱՒԱՆ

Ինչպէս կը տեսնուի, այս բառերուն մէջ իմաստի փոփոխութիւն կամ գրաբառէն տարբեր իմաստ չկայ։

Բայց թէ ի՞նչպէս մեր բարեկամն այսչափ տարբերական դիտելեաց ուշադրութիւն չընծայելով, իւր յաջողակ գրիչն ու գնահատելի տաղանդը ձախող դատի մը նուիրած է, այս է մեզ զարմանք և զաւ պատճառող կէտը։ Հաւատալ, մինչեւ իսկ գրական հրապարակէն արտաքսելու ելնել մեր նախնեաց լեզուն, առանց բնաւ նկատելու թէ մեր աղքատիկ աշխարհաբառին ներկայ զարգուն վիճակն այն ճոխ լեզուին կը պարտիմ մեծաւ մասամբ, ստուգիւ չէր սպասուեր Ֆնոդլեան էֆէնտիի ուշմութենէն։ Զինք նախապաշարող երկիւղն, որ շարժառիթն եղած է իւր այս յախուռն արշաւանին, կրնար թերեւս 40—50 տարի առաջ հաւատացող ունենալ, բայց այժմ երջերուաքաղ մ'է, զոր երազով ոչ մէկ յեսասիա կրնայ գտնուիլ այլ եւս։

Մեր աշխարհիկ և գրաբառ լեզուներն՝ իրենց կազմութեամբ՝ այնչափ կը տարբերին իրարմէ որ կարելի չէ ի մի ձուլել։ Բայց ազգակցութիւն և միանգամայն սերտ առնչութիւն ունին միմեանց հետ։ Առաջինը միշտ կարօտ եղած է վերջինին։ իւր արդի ճոխութիւնն ու արգուշդրը մեծաւ մասամբ անկէ ստացած է; և այսուհետեւ ալ դարձեալ կարօտ է անոր, ինչպէս կը յայտարարէ նաեւ այն մեծագոյն աշխարհաբարեանն՝ Հ. Այտընեան։ Այս պատճառաւ պարտիմք յարդել գրաբառն և օգուտ քաղել անոր անժխտելի առաւելութիւններէն։

Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

(1) Աշխարհաբառն ունի արդարեւ քանի մ'ածանցական մասնիկներ ու ձեւեր որ իրեն յատուկ են, բայց սխալ է ըսել թէ «մեր արդի լեզուին մէջ գործածուած ածանցման ամեն ձեւերն ու բառերը բացարձակապէս անկախ են գրաբառէն»։

(2) Խնդալ բայն, որ աշխարհաբառի մէջ փոխած է իմաստը։

(3)։ Ցաճախ գործածուած առած մ'է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՆԱՄԱՑԻ խնդրոյն մէջ չարաչար խարուած և շահագործուած, ֆրանսացի ժողովուրդն արդարութիւն կը պահանջէ, և դատական նախարարը դատի ենթարկել կուտայ նոյն ինքն Պ. տը Լէսէբս, անուանի Լէսէբս, այն մեծ ֆրանսացին որ Սուէզի ջրանցքը շինեց, ինչպէս և անոր երկու որդիքն, և Բանամայի Ընկերութեան Վարչական Խորհրդոյ միւս անդամներն, որոցմէ մին, Պառոն Ռէֆինաք, ի լուր այս դատավարութեան, յանկարծամահ կ'ըլլայ։

Իրաւ, շատեր դիտողութիւն ըրին թէ «Ա՞խթ չէ՞ ֆրանսայի մեծագոյն «փառքերէն մին իբրեւ հասարակ խա«բեբայ մը դատարաններու առջեւ քաշ«ըլլ։ Որչափ ալ սխալած ըլլայ, միթէ «Պ. տը Լէսէբս իրաւունք մեծագործու«թիւն մը չբերաւ Սուէզի ջրանցքը շինե«լով հակառակ ամեն ընդդիմութեանց, «հակառակ այն ամեն անգլիացի և ու«րիշ ճարտարագիտաց որք անիրագործ«ծելի է կ'ըսէին։ Հակնալի չէ՞ որ «ընդդիմութեանց ականջ չկախելու վար«ժած Պ. տը Լէսէբս Բանամայի մա«սին իւր դէմ եղած հակառակութիւն«ներն ևս չարամտութեան կամ նա«խապաշարման վերագրած ըլլայ։ Եւ «այս դատը բանալով, և օտարազ«գեաց առջեւ խայտառակելով զՖրան«սա, միթէ բաժնետէրք և պահան«ջատէրք իրենց կորուսած միլիոնն«երուն պիտի տիրանա՞ն։»

Բայց Ֆրանսացի ժողովուրդը մէկ միլիառ 300 միլիոն ֆր. կորուսած է ի Բանամա։ Պէտք է վճանգամ ընդ միշտ հասկցուի թէ անուններու և տիտղոսներու կրթնելով Ֆրանսացի ժողովուրդը խաբել դիւրին գործ մը չէ։ Պէտք է օրինակ մը տալ ապագայ սեղանաւորներու և գործիչներու։ Պէտք է հասկցնել որ Ֆրանսացի մամուլը կաշառելով անիրագործելի ձեռնարկներն իբրեւ գործնական բաներ ցուցնել չի ներուիր ոչ իսկ Պ. տը Լէսէբսի մը։

Պ. Մոնչիքուռ, կառավարութեան կողմէ կարգեալ հայուն յարդարը, Բանամայի Ընկերութեան մէջ կորուսեալ 1,300 միլիոն ֆր.ի գումարն հետեւեալ կերպիւ կը տասորաբաժնէ։

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԾԱԽՔ.—

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՔԵՐ ՍՈՅՆ ՓՈՓԱՐԷՆ ԲԱՆ ՄԸ ՀԱՅՑ

	Մէջէն Ֆր.։
Նախնական աշխատութիւններ, Բանամայի Պարանոցին մէջ ընդհանուր ծախքեր	175
Արտօնութիւնը ձեռք բերելու ծախքեր և ընդհ. ծախքեր Փարիզի մէջ	64
Թուղթեր ի շրջաբերութիւն հանելու ծախք, լրագրաց տրուած դրամն և տուրքեր	88
	327

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԾԱԽՔ.—

ՆԱԽԱԳԻԾ ՍՈՅՆ ՓՈՓԱՐԷՆ ԲԱՆ ՄԸ ԿԱՑ

Զրանցի շինուած մասն, մեքենայք, փոխադրութեան ծախքով	166
Ի սկզբանէ անտի ձեռնարկուներուն վճարեալ գումարներ՝ շինութեանց փոխարէն	443
Բանամայի երկաթուղին գնելու համար վճարեալ	93
	702

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԾԱԽՔ.—

Բաժնետէրաց բաշխուած գումարներ իբրեւ տոկոս և պարգեւաւոր փոխառութիւնէն եկած թիւերը վճարելու համար աւանդ դրուած գումար 271

Բանամայի ջրանցին համար եղած ծախսուց ամբողջութիւնը 1,300

Զհաշուելով այս մեծ գումարին տոկոսները, կրնայ ըսուիլ թէ ծախսուց այս վերջին մասն ետ տրուած է ֆրանսացի ժողովրդեան։ Ա. մասն, 327 միլիոն ֆր., բոլորովին կորած է։ Բ. մասն, 702 միլիոն, կրնայ բան մը արժել եթէ շինութիւնն յառաջ տարուի։ Իսկ եթէ նոր Ընկերութիւն և նոր դրամագլուխ չգտնուի, այն ևս կորած է։ զի թէպէտ կատարուած շինութիւնը բան մը կ'արժէ, բայց ըստ արտօնագրոյ տրամադրութեանց, պայմանաժամուն լրանալուն (առաջիկայ փետր.ին) եթէ դարձեալ յառաջ չտարուի, Բուլմպիոյ տեղական կառավարութիւնն ամեն բան պիտի գրաւէ և իւրացնէ, և այն ատեն Ամերիկացիք պատրաստ են թէ՝ շինութիւնն ի գլուխ հանելու և թէ ազոր շահ մ'ընելու։ զի մէկ միլիառ 300 միլիոն ֆր.ի նախնական ծախքն իրենց գրպանէն եղած չըլլալով, ադոր փոխարէն հասոյթ հանելու պարտաւոր չեն։

Ծախսուց ուշադրաւ մաս մ'է աւելի քան 20-30 միլիոն ֆր.ի գումարն որ միայն Ֆրանսացի լրագրաց տրուած է իբրեւ միջոց անոնց աջակցութիւնն ստանալու, որպէս զի իրենց յօդուածներով և «սեղանաւորական տեսութեամբք» Ֆրանսացի ժողովուրդն հրաւիրեն մասնակցիլ Բանամայի փոխառութեանց։ Պ. տը Լէսէբս ի սկզբան լրագրաց դրամ չէ տուեր, և տեսեր է որ ժողովուրդը չի մասնակցիր։ Երբ լրագիրները չահեր է, սկսեալ Թանէն և Ֆիկարոյէն, ժողովրդին միլիոններն սկսեր են հոսիլ Ընկերութեան արկղներուն մէջ։

Եւ հիմակ այն միլիոններուն հաշիւը կը փնտռէ ժողովուրդը։

Հայք ևս քանի մը հարիւր ոսկի կորուսած են այս գործի մէջ, Քրէտիլիոնէի Կ. Պոլսոյ ճիւղին ձեռամբ Բանամայի թուղթերէն գնած ըլլալով պարբերաբար։

ԱՒՍՏՐԻՈՅ կառավարութիւնը դիտողութիւն ըրաւ Հռոմայ կառավարութեան՝ երեսփոխանական վերջին ընտրութեանց մէջ Իռէտէնթեան բանախօսութիւններ արտասանուելուն առթիւ։ Ցայտնի է թէ Իտալիոյ Իռէտէնթեանք իտալիսօս քաղաքաց և գաւառաց Իտալիոյ հետ միացման կուսակից եղած են ի վաղուց անտի։ Վիեննայի կառավարութիւնը դիտել տուեր

—)(177)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻԹՊՈՒՌ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԾԻԱԾԱՆԸ

Իր նուաղման պահուն եղածները չէր գիտեր։ Երբ խելքը գլուխն էր եկած, կինն ալ հոն չէր։ Թորթիյեարը տեսաւ իր քովը ծնրադիր, իր գլուխը բռնած, և մարդն հասակին երկայնութեամբը ճամբուն վրայ պառկած։ Այն ատեն հասկցաւ թէ Թորթիյեար ազատած և պաշտպանած էր զինքը։ Սակայն, այն ատեն միայն քիչ մը ապահովուած էր երբ Սանտրիյեոն, օգնելով իրեն որ ոտքի ելնէ, բազկացը մէջ առած էր զինքն ու համբուրած։ Վերջապէս, Ժօրժ հասած էր, և այն ատեն միայն, բոլորովին ապահով զգացած էր ինքզինքը։

—Առեւանգել կ'ուզէին զիս, յարեց մանկամարդ աղջիկը։ ինչո՞ւ։ ի՞նչ ընել կ'ուզէին զիս։ Չեմ հասկնար։

—Գաղտնիք մը կայ այդ բանին մէջ որուն բացատրութիւնը պիտի առնենք, ըսաւ տիկին Մելվիլ։

—Իսկ ո՞վ էին այն կիներն ու մարդը։

—Անչուշտ պիտի գիտնանք։ Բայց դուն ազատեցար այդ թշուառականներուն ձեռքէն, աղջիկս, ալ վախնալու բան մը չունիս, ուրեմն այլ եւս մի՛ նեղուիր։

Ժօրժ անխօս կը մնար, մտածկոտ։

—Ոճրագործները, կը մտածէր, վճարուած են ոճիրը գործելու համար։ այո, ուրիշի մը հաշուոյն կը գործէին, և այդ միւսը Հէքթոր տը Շանպլէն միայն կրնայ ըլլալ։

Այս էր իր համոզումը, բայց պարտք համարեց ծածկել իր մտածումը։

Երեքն ալ նստած էին քանաբէի մը վերայ, տիկին Մելվիլ երկու նշանաններուն մէջտեղ։ Բռնած էր Մառի-Մատըլէնին մէկ ձեռքը, ինչպէս նաեւ Ժօրժինը և երկուքն ալ իր ձեռքին մէջ կը բռնէր։

Նախ ծանոյց անոնց թէ երկար ատենէ ի վեր մտածած էր իր որդեգիր աղջկան դրամատիրին վրայ։ Թէ այդ դրամատիրս, որ հարիւր հազար ֆրանք էր, պիտի յանձնուէր Մառի-Մատըլէնին ամուսնութեան առթի օրը։

Եւ ըստ որում երիտասարդն ու մանկամարդ աղջիկը կը բողոքէին։

—Որդեակս և իմ միջեւ, որոշուած բան մըն է այս, ըսաւ, և ճշմարիտ ցաւ մը կը պատճառէ մեզ եթէ չընդունիք։ Բայց Թողուք ասիկա։ աւելի լուրջ, աւելի ծանր բան մը ունիմ ձեզ ըսելու և ասկէց նպաստաւոր ժամ չեմ կրնար գտնել խօսելու։

Պատրաստելէ ետք Մառի-Մատըլէնը լսելու ցաւագին պատմութիւնն, և բացատրելով հանդերձ նմա թէ ինչու մինչեւ այն օրը լռութիւն պահելն հարկ համարած էր, յայտնեց անոր ծննդեան սոսկալի գաղտնիքը։

Կը հասկցուի թէ ինչ յուզումով Մառի-Մատըլէն և Ժօրժ մտիկ կ'ընէին։ Սիրտերնին կը տեղմուէր։ շնչասպառ էին և կախուած տիկին Մելվիլի շուրթերէն։

Սակայն, սա չէր ըսած թէ կապրիէլ Անկլատին անձին վրայ գործուած հրէշային ոճիրին հեղինակն էր Կասթոն տը Մելվիլ։ Ապագային կը վերապահէր իմացունել Մառի-Մատըլէնին թէ Բոլ իր եղբայրն է։ Նոյնպէս ծածկել հարկ համարած էր թէ խեղճ կապրիէլ, խելքը կորուսեալ, ցմահանոցի մը մէջ փակուած էր և անկից խոյս էր տուած։ Դիտէր թէ մանկամարդ աղջիկը շատ զուարճացած էր և չէր ուզեր որ անոր սիրուն իրարու ետեւէ անողորմ փորձերու ենթարկուի։ Ուրեմն գէթ առ այժմ և մինչ ցնոր տնօրինութիւն նախաձեռք կը համարէր թողուլ որ մանկամարդ աղջիկը կարծէ, ինչպէս միշտ ըսած էին իրեն, թէ մայրը մեռած էր զինք ծնելէն ետքը։

—Մայրս, խե՜ղճ մայրս, կը կրկնէր Մառի-Մատըլէն, հեծկլտալով։

Տիկին Մելվիլ թողուց որ անցնի արցունքի այդ տագնապ և յարեց։

—Հիմակ, սիրելի զաւակս, պիտի խօսիմ քեզ քու ազգականներուդ վրայ, վասն զի դուն ընտանեզուրկ չես, որպէս կը կարծես մինչեւ այսօր։ Ժերոմ Անկլատ, մօրդ հայրը, կ'ապրի տակաւին, և մօրեղբայրը Պիեռ Անկլատ, բարձրատիճան սպայ։

—Ա՜հ, գոչեց Մառի-Մատըլէն, մէկէնիսկէ տիրութենէն ուրախութեան անցնելով, ուրեմն մեծ-հօրս և հօրեղբօրս վրայ է որ խօսեցար ինձ Պ. Մարքիզ։

—Պ. Մարքոս մարքիզն արդարեւ կը ճանչնայ ժերոմն ու Բիեռ Անկլատը։

—Եւ Մանտրաժէ պիտի գա՞ն։

—Վաղը, սիրելիս, հոս պիտի ըլլան։

—Վաղը··· ա՜հ, Ժօ՛րժ, Ժօ՛րժ։

Ամեն ուրախութիւններու, ամեն երջանկութիւններու արժանի ես, ամենասիրելիս, պատասխանեց երիտասարդը։

—Պէտք է յաւելում, սիրելի Մառի-Մատըլէնս, յարեց տիկին Մելվիլ, թէ քու մեծ հայրդ և մօրեղբայրդ քեզ համար սատիկ սէր կը տածեն։

—Պիտի սիրեմ, կը սիրեմ զանոնք։ Ա՜հ, չատ պիտի սիրենք, Ժօրժ։

—Այո, սիրելի Մառի-Մատըլէն, ընտանիք մը ունիմք, իմս ալ պիտի ըլլայ ան։

Այս պահուս, արեւին դուռը զարնուեցաւ։

Ժօրժ ոտքի ելաւ, գնաց բանալ և հարցուց։

—Ո՞վ է։

—Պարոն Ժօրժ, պատասխանեց ծառան, Սանտրիյեոն եկած է լուր առնելու Օր. Մառի-Մատըլէնին վրայ։ գոհացուցէք կերպով պատասխանեցի իրեն։ բայց ինք չգոհացաւ, անպատճառ կ'ուզէ տեսնել օրիորդը։

—Թող գայ, Ժօրժ, թող ներս մտցուցէք, գոչեց Մառի-Մատըլէն։

—Այս խեղճ կիսոնն է որ իր աղջկան պէս կը սիրէ զձեզ, ըսաւ Տիկ. Մելվիլ։

Մառի-Մատըլէն ժամանակ չունեցաւ պատասխանելու։ Սանտրիյեոն, իր խարտեաշ երկար մազերն ուսերուն վրայ թափթըփած, սրահ կը մտնէր։

Տիկ. Մելվիլ զսպանակէ չարժածի պէս ոտքի ելաւ և դէպ ի Սանտրիյեոն գնաց, որ կեցած էր և անշարժ կը մնար, աչուքները խոշոր բացած, ապշահար։

Նախկին վարպետն ու նախկին գործաւորուհին միրար կը դիտէին գոգահար, վարանելով զիրար ճանչելու։ Առաջին անգամ Սանտրիյեոն գոչեց։

—Տիկին Մելվիլ՞։

—Ո՞ղջ, ո՞ղջ, բացագանչեց տիկին Մելվիլ, և հո՛ս, հո՛ս է որ կը գտնեմ զինքը։ Ա՜հ, տէ՛ր Աստուած, մէկ վայրկեանի մէջ կը մոռցունես իմ տանջանաց երկար տարիները։

Դէպ ի Մառի-Մատըլէն դառնալով, որ կը նայէր չլմորած, բան մը չհասկնալով այս տեսարանէն, յուզումէ թրթռացող ձայնով և ակնարկին մէջ ճառագայթումով մը ըսաւ։

—Այս կինը, զոր այսպէս Սանտրիյեոն կը կոչեն, կը սիրէ զքեզ իր աղջկան պէս։ ա՜հ, այո, կրնայ, պէտք է այդպէս սիրէ զքեզ։ և դուն, Մառի-Մատըլէն, երբէք բաւական զորով չպիտի ունենաս, կը լսո՞ս, երբէք բաւական զորով չպիտի ունենաս այս խեղճ կնոջ նկատմամբ որ ամեն կերպ վիրա, ամեն տառապանք քաշած է, այս պահին նկատմամբ որ մեռած կը կարծուէր և որուն վրայ այնքան ատեն արցունք թափուեցաւ։

Մառի-Մատըլէն, քեզ յայտնեցի կապրիէլ Անկլատի դժբախտութիւնները, բայց ինչ որ չըսի քեզ, վասնզի չէի գիտեր, այն է թէ կապրիէլ Անկլատ կ'ապրէր տակաւին։ Ահա՛ ինքը, Մառի-Մատըլէն, ահա՛ համբուրէ մայրդ։

Մայր ու աղջիկ ուրախութեան սրտաճմլիկ աղաղակ մը արձակեցին միեւնոյն ժամանակ և իրարու գաղկաց մէջէն նետուեցան։ Ա՜հ, բացատրութիւններ չէին խնդրեր իրարմէ։ Սեղմի կերպով փաթթուած՝ իրենց արբշռութեան կը յանձնէին ինքզինքնին։ Եւ խղդուկ հառաչանքներու ու հեծկլտանքներու մէջէն կ'իմացուէր տրտուած ու փոխարինուած համբոյրներուն շչուկը և սա բառերուն մշտակրկնումը։ Աղջի՛կս։ Մա՛յր։

Այս սրտայոյզ տեսարանի միջոցին ուր ուրախութիւնը, երջանկութիւնն արցունք թափել կուտային, տիկին Մելվիլ և Ժօրժ Նոթիէ եւս կուլային լռիկ մնիլկ։

Եւ երբ մայր ու աղջիկ քիչ մը հանդարտեցան և երբ, հիմակ, իրարու երես կը նայէին, յափշտակուած, իբր թէ առաջին անգամ տեսած ըլլային զիրար, Տիկ. Մելվիլ կ'ըսէր կապրիէլի։

—Հօրեղբայրս, ժիտու աբքան մկրտեց ձեր աղջիկը և Մառի-Մատըլէն անունը տուաւ անոր։ և երբ մեռած կարծեցին զձեզ, ժիտու աբքան գնաց առաւ Մառի-Մատըլէնն իր ատտուին քովէն, ինձ բերաւ, և ես երդում ըրի ձեր տեղը բռնել անոր մօտ։ վերջապէս մեծցուցի, սիրեցի զայն, ի յիշատակ ձեր։ Կապրիէլ, Մառի-Մատըլէնն իմ աղջիկս ըրի։

(Շարունակելի)

է թէ Թրէնթէի և Թրիէսթէի անունները մեծ տեղ մը բռնած են երեսփոխանական յայտագրերուն մէջ։ Այն քաղաքներուն վրայ խօսուած է իբրեւ իտալական քաղաքներու վրայ։ Թրիէսթէցի գաղափարներու կարծիքն հարցուած է երեսփոխական ընտրեցեալ վրայ, իռէտենդական տեսակէտով, և կառավարութիւնը չէ յայտարարած թէ այսպիսի խնդրոյ մը վրայ խօսիլ հակառակ է իտալիոյ բարեկամական յարաբերութեանց դրացի Տէրութեան հետ։ Իտալիոյ արտաքին գործոց նախարարը պատասխանեց Վիեննայի կառավարութեան թէ այս ընտրական միջադէպերուն կարեւորութիւն տալ չէ ուզած տեղային կառավարութիւնը, խնդիրը չմեծցնելու և ընտրական գործիչներուն աժան ժողովրդականութիւն մը չընծայելու համար։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՆԱՑՔ։ —Զ՝Տիկին Հարիսը և զՏիկին Քլիվլէնտ արդէն ներկայացուցինք մեր ընթերցողաց։ Հիմա կը մնայ Տիկին Հարիսնի և Տիկին Պլէյնի մէկ դէպքը պատմել։ Պ. Պլէյն մինչեւ մօտ ժամանակներս Պ. Հարիսնի ալեկից էր իբրեւ արտաքին գործոց նախարար։ Ցառաջագոյն երկոս նախագահական ընտրելի հանդիսացած էր և չէր յաջողած։ Վերջին անգամուն ուզեց որ Պ. Հարիսնի տեղ ինքն ըլլայ ընտրելի Հանրապետականաց ի Նախագահութիւն։ Բայց Հանրապետականքը զՊ. Հարիսնն նշանակեցին իրենց ընտրելի, և Պ. Պլէյն որ այս առթիւ գործէ քաշուած էր, իւր ձայնը Պ. Հարիսնի տալով ապարդէն հեռացաւ։

1881 ին, Պ. Հարիսն Ինտիանա Նահանգին կողմէ Ուաշինկթընի Ծերակոյտին անդամ ընտրուած էր։ Իւր կին առաջին անգամ կը մտնէր Ուաշինկթընի ընկերային ակմբոց մէջ։ Նախագահ Պ. Կարֆիլտի կողմէ նախագահական պատան մէջ տեղի ունենալիք ընդունելութեան մը առթիւ, Տիկին Կարֆիլտ խնդրած էր Տիկին Պլէյնէ՝ որպէս ամուսինն արտաքին գործոց նախարար էր այն ատեն ալ՝ որ իրեն օգնէ հիւրերն արժանապէս ընդունելու։ Պ. Կարֆիլտ տի խորհրդով, որ կ՝ուզէր իւր կողմ շահիլ զՊ. Հարիսն՝ Ինտիանայի ծերակուտականը, Տիկին Կարֆիլտ նոյն առաջարկն ըրաւ նաեւ Տիկին Հարիսընի։ Սա որոշեալ ժամուն գնաց պատան։ Մասնաւոր դահլիճ մը մտցուցին զինք, ուր մինակ գտնուեցաւ Տիկին Պլէյնի հետ։ Պատանան սովորութեանց անտեղեակ, Տիկին Հարիսն ազատեց Տիկին Պլէյնի որ քիչ մը ծանօթութիւն տայ իրեն։ Որովհետեւ Տիկին Պլէյն զինք չճանչնար ձեւեր կ՝առնուր, չուարեալ տիկինն ըսաւ։

—Ես եմ Տիկին Հարիսն։ իմ ամուսինս այս օրերս ընտրեցաւ Մերակոյտի անդամ Ինտիանայի Նահանգէն։ կը ճանչէք զինք։ . . Թերեւս անունը լսած ըլլաք։

—Իրաւ որ չեմ ճանչնար, պատասխանեց Տիկին Պլէյն արհամարհոտ ձեւով, մանաւանդ որ բարկացած էր իրեն ընկեր տրուելուն համար այնպիսի կին մը որոյ ամուսինը գոնէ նախարար մը չէր։ Իրաւ որ չեմ ճանչնար։ հոս ամէնքն նոր մարդիկ կուգան կ՝երթան որ ամէնքն յիշել կարելի չէ։»

Տիկին Հարիսն չմոռցաւ այս թշնամանքն, և երբ ժամանակ անցնելով Պ. Պլէյն նորէն և նորէն անյաջող մնաց նախագահական պայքարին մէջ և երբ Պ. Հարիսն նախագահ ընտրեցաւ, թէեւ Տիկին Պլէյն շատ լաւ գիտէր թէ ո՛վ են եղեր Պ. եՏիկին Հարիսն՝, բայց սա ըսա կարելւոյն քիչ անգամ տեսնուեցաւ իւր նախկին արհամարհոտ ընկերուհւոյն հետ։

Պ. ՕՆՈՒ ՓՈԽԱՆԱԿ Պ. ՆԵԼԻՏՈՎԻ։ — Օտեսայէ Նոյմ. 12 թուով կը գրուի թէ ռուս լրագիրք արդէն հաղորդած են այն լուր թէ Պ. Նելիտով ի մեծոյ պիտի քաշուի գլխաւոր դիւանագիտական ծառայութենէն և իրեն պիտի յաջորդէ Ամէնքի դեսպան Պ. Օնու, որ լաւ ծանօթ է Կ. Պոլսոյ մէջ, երկար ժամանակ ռուսական դեսպանութեան խորհրդականի պաշտօն վարած ըլլալով։

Պ. ԲԱՆՊՈՆ Ի ՀՌՈՄ։ — Սթանտարտ թղթակիցը կը գրէ Հռոմէ թէ Կ. Պոլսոյ դեսպան Պ. Բանպոնի վերջերս Իտալիոյ մայրաքաղաքն այցելութիւնը կը վերաբերէր արեւելեան երկրաց մէջ բնակեալ կաթոլիկներու Ֆրանսայի կողմէ հովանաւորութեան ծանօթ խնդրոյն։ Վերջերս շատ մը դժուարութիւնք ծագած են այս մասին, զի գերման, իսպացի և ուրիշ ազգ-ֆրանսացի կրօնական հաստատութիւնք յանձն չեն առնուր ֆրանսական հովանաւորութիւն, և երբ պէտք ունենան, ուղղակէս իրենց կառավարութեանց կը դիմեն։ Վատիկան անկարող կ՝ըլլայ կարգադրել այս անհամաձայնութիւններ, ցորչափ Ֆրանսա կը պնդէ թէ՝ ըստ վաղեմի սովորութեան՝ ինք միայն պէտք է ըլլայ եւրոպեան պաշտպան Տէրութիւն արեւելեան կաթոլիկաց վրայ, այսինքն՝ ուրիշ եւրոպացի միսիոնարներ իւր պաշտպանութեան ներքեւ պէտք է գտնուին։ Պ. Բանպոն շատ մը իրաւունքներ և նկատողութիւններ մատուցեր է Պապին ուշարութեան, և խնդրին կիսա ծանրակշիռ վիճակի մէջ կը համարուի։ զի Պապն ո՛չ Ֆրանսայի «խթերը» կոտրել կ՝ուզէ, ո՛չ ալ միւս եւրոպեան Տէրութեանց իրաւունքները կրնայ ժխտել։

ՌՈՒՍԻՈՅ մէջ կին բանտակեալները խարազանով պատժելու սովորութիւնն և ընդհանրապէս կանանց մասին մարմնական պատիժները չնչուեցան կայսերական Ուքազով։

ԲԱՆԱՄԱՑԻ գործին վրայ այս աւուր սուրհանդակաւ առնուած լուրն այն է թէ ջրանցը չմնելու վերջին պայմանաժամն որ առաջիկայ փետր։ 28ին կը լրանայ, Քոլոմպիոյ կառավարութեան կողմէ տարի մ՝ուս երկարաձգուած է։

ԵՐԴՈՒՏԵԱԼ ԴԱՏԱՒՈՐԱՑ զրուիւնն (ազգեռնական դատերու մէջ) ջնջել որոշած լինելով Ռուսիոյ Կայսրութեան Խորհուրդը, Պ. Մանասէյն, դատական նախարարն, հրաժարական տուաւ։

ՏԻԿՆ ԺԻՎԻԼԻԴ ԱՏԱՆ, ֆրանսացի քաղաքագէտ-գրագիտուհին, Նուվէլ Ռէվիւի տնօրէնն, խմացուցեր է թէ պատեհ առթիւ մ՝ընտրելի պիտի ներկայանայ ֆրանսական Ակադեմիոյ անդամակցութեան։ Քաղաքագէտ-գրագէտներու սեփական ատթոռներէն միոյն աչք տնկեր է։

ՋՕՐ. ԳՐԻԱԼՄՈՆ Գրուսէլ վերադառնալուն պէս, երկու ճաքոնցիք ներկայանալով իրեն առաջարկեր են ճաքոն երթալ՝ Թոքիո մայրաքաղաքին ամրութիւնները չնչելու։ Զօրավարը պատասխաներ է թէ ինք զԹոքիո ամրութեանց կարօտ չի տեսներ, զի ո՞վ միտքէն կ՝անցունէ ճաքոնի վրայ յարձակիլ։ Բայց եթէ ճաքոնի կառավարութիւնը կը պնդէ, ինք չի կրնար մինչեւ հոն երթալ, բայց յատակագծերը կրնայ տեսնել և քննել ի Պրուսէլ։

ԱՂԳԵՒՔԵՐ

ԼՈՒՐԵՐ

Դատական և կրօնական գործոց նախարարութեան կողմէ մատուցեալ տեղեկագրոյ մը վրայ՝ կայս. իրատէ մը արտօնած է Բերայի Ս. Յարութիւն եկեղեցւոյ և Նարեկան վարժարանի վերաշինութիւնը, զոր ստանձնած են Լսաեան Աղն. Եղբարք։

Բ. Դրան կողմէ Ազգ. Պատրիարքարանի յանձնուեցաւ՝ Նիկոմիդիոյ վիճակին Զէնկիլէր գիւղի եկեղեցւոյ շինութիւնն արտօնող կայս. Ֆէրմանը։ Ինչպէս անցեալ օր ծանուցինք, Նիկոմիդիոյ առաջնորդ Գեր. Ստեփան եպիսկոպոս Բովակիմեան ձեռնարկած է այդ եկեղեցւոյ շինութեան։

Գեր. Գաբրիէլ եպիսկոպոս Սըրուանձտեանցի առողջական վիճակը կը մնայ նոյն, ինչպէս բացատրած էինք երէկ։ Գեր. հիւանդը մերթ ընդ մերթ իւր մտաց պայծառութիւնը կը վերստանայ, բայց ուրիշ անգամներ դժուարութիւն կը կրէ ներկայացողները ճանչնալու։ Իրրեւ միակ մնացորդ կաթ կը տրուի, և ամէն մտաւոր յոգնութիւն բացարձակ արգիլուած է իրեն։ Բաղմաթիւ եկեղեցականք և աշխարհականք հետզհետէ այցելութեան կերթան Ն. Գերապատուութեան։

Այս երկուշաբթի օր Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ վայելուչ հանդիսաւոր տեղի ունեցաւ Թաշտապուն Կարապետ էֆէնտիի ամուսնութիւնն ընդ Օր. Մերսեդէս Համբարձումեանի։ Ներկայ էին ազգային և օտարազգի բազմաթիւ հրաւիրեալներ։ Պսակի արարողութեան ներկայ էին եկեղեցական դասէն Գեր. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանց, Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրը, Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրդատ Ծ. վարդապետ և քահանայք։ Կնքահայրն էր Ագաթան էֆէնտի Թաշտապուն։ Գեր. Մելքիսեդեկ Սրբազան քարոզ մը խօսելով բացատրեց Ս. Պսակի խորհուրդն և խրատական խօսքեր ուղղեց նորապսակ ամուսնոյն։

Յաւարտ պսակի արարողութեան, ներկայք Թաշտապուսնանց բնակարանն երթալով իրենց հնորհաւորութիւնները յայտնեցին նորապսակ ամուսնացելոց և պատուասիրուեցան արժանաւորապէս։

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՆԱՐԱՆ ՏԱՅԿԵՐԻՆԵ. ՀԱՅԵՐԻՆ

Արիկեան Մինրան էֆ-ի մէկ նոր հրատարակութիւն

Գին 8 գրուշ

Մեղուաչան հեղինակին սոյն գործը՝ որ մեծաւ խնամով պատրաստուած է, կը պարունակէ առաւել քան 30,000 հին եւ նոր զրպիտական, պաշտօնական, ընտանեկան եւ գիտական բառեր, յատուկ անուններ եւ 8000է աւելի մասնաւոր ասացուած, ոտ եւ արարերէն ու պարսկերէն առածք եւ ասացուածք։

Կեդրոնատեղին է Մէջտան-Զարշը Դումբխան Թիւ 8։ Գաւառները ՊՈՍԱՐՕՅՀի փոխարէն կը դրկուի։ 332 1—2

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ 1893

ԹՈՒԱԿԱՆԵՒ ԲՐԻՍՏՈՍԻ ՍԵՊՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Տպագրութիւն Սէրվիչէն

Գին գրաստան ֆրանք

Ազգ. Կեդրոնական Վարչութեան կրօնական ժողովոյ կողմէ վաստակեալ սոյն օրացոյցն՝ որ միւս տարիներու բաղդատմամբ ալ աւելի նոր է, պարունակելով մանաւանդ աւուր պտղաշամի շաբաթներն ալ՝ այսինքն Աւագ օրհնութիւնք, հացք, մեծացուցչէր, համարձիր եւ այլն, ի վաստառ հանուած է։

Օրացոյցն այս անգամ ոչ թէ միայն առդասարակ ամէն ազգայնոց, այլ եւ եկեղեցական երեւելագոյնութեան կը ծառայէ, որով Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութիւնը որ օրացոյցի արդիւնքն յատկացուցած է, ի պէտս պատեպարելոց, առանց կուտայ բարեպաշտ ազգայնոց օրացոյց մը գնելով լուսանկի մը շնորհել այն գանձանակին՝ զոր Տէր Ցիսուս Քրիստոս օրհնեց ըսելով «աղքատաւ ասեմ Ձեզ, զի այրին այն աղքատ՝ աւելի արկ ի գանձանակն քան զամենեսին»։

Կեդրոնատեղին է Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը ի Կ. Պոլիս, Մեծ-Նոր խան, միջնայարկ Թիւ 48, 49, 50։

Հոգաբարձութեան կնիքը չիրող օրինակներն աւերական չեն։ 307

Ա Զ Դ

Ս. Կարապետ եկեղեցւոյս վագիէն Իւսկիւտար Նոր-Թաղ Մէջ օղու փողոց 56 Թիւ 6 կանգուն երեսով և 28 կանգուն 18 մատ խորութեամբ ընդամենն 175 քառակուսի կանգուն և 13 մատ գետնոյն տասն բաժնէն ինն բաժինը Ս. եկեղեցւոյս մակիւլ մնացած լինելով՝ ի վաճառ հանուած է տասն և հինգ օրեայ պայմանաժամու առճուրդի դրուելով։

Արդ՝ առճուրդի մասնակցիլ փափաքողները նոյն պայմանաժամու մէջ կը հրաւիրուին ի Թաղ. Խորհրդարանս։

Ի Դիմաց Թաղական Խորհրդոյ

Սկիւտար Ս. Կարապետ եկեղեցւոյ

Վ. Ադենոպուլէ Վ. Ադենոպուլ

Մ. ՄԱՐՏԻՏԵԱՆ Գ. Ե. ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ

ՀԵՌԱԳԻՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ

ՊԵՐԼԻՆ, 22 Նոյմ.—Գերմանիոյ Երեսփոխանական ժողովն այսօր բացուեցաւ։ Կայսրն իւր բացման ճառով ըսաւ թէ ինք և իւր նիզակակիցք խաղաղութեան պահպանման նախանձախնդիր են։ Ամէն Տէրութեանց հետ բարեկամական յարաբերութեանց շնորհիւ, և իւր խաղաղասէր ջանադրութեան մէջ իւր նիզակակցաց աջակցութեան բերմամբ, Գերմանիա կը յուսայ որ իւր իմաստական և տնտեսական զարգացման գործին մէջ արգելքի չպիտի բախի։

ՓԱՐԻԶ.—Բոքթօ-Նովոյէ կը հեռագրուի թէ Ֆրանսական զօրքերն առանց պատերազմի մտած են Տահոմէյի մայրաքաղաքն Ապոմէյ, ուստից Պէհանզին թագաւորը փախած էր։

—Բանտայի խնդրոյն վրայ հարցապնդումէն ետքը, Երեսփ. Ժողովն որոշից, Պ. Լուպէի հանութեամբ, խորհրդարանական քննիչ յանձնաժողովոյ մը կազմութիւնը։

ՊԵՐԼԻՆ.—Զօր. Վէրտէր, երբեմն գերման պիտուրպական կցորդ ի Փեթերսպուրգ, Նիվանիոյ զօրավարին կը յաջորդէ իբրեւ գերման դեսպան նոյն մայրաքաղաքին մէջ։

ԼՈՆԴՈՆ.—Մարտքի անգլ. դեսպան Սըր Զարլզ Իւան Սմիթ դեկտ. ամուսն Մարտքի պիտի երթայ Նորէն։

ՊՐԻՍԷԼ.—Ի Պրիւժ և ի չրէկայս իբր 15 դէպք հնտապտի։

ՓԷՇԹԱ.—Երէկ հս 2 վար. 4 մեռ։

ԻՍՄԱԵԻԼԻԱ — Նոյեմբեր 11էն մինչեւ 20 Սուէզի ջրանցէն անցնող 62 շոգենաւերուն տասնօրեայ հատոյթն եղած է 1 միլիոն 750,000 ֆրանք։

Վակտան

ՊՈՒԼՈՒՆ, 11 Նոյեմբեր

ՀԵՆԹԱՑԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՈՅՑ

3 տարի հոնտրայի վրայ	110 ½
3 » փարիզի »	22 85

ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՆՈՎՈՒՏ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Դ. Սէրի)	23 27½
Բերայի մէջ	— —
Առաւօտուն բացուեցաւ	23 27
Կէս օրին	23 27
Թանգիպանը Օսմանիէ երէկ երեկոյ	82 29
» » ժամ 5ին	— —

ՐԵՆԹԱՑԻ ԱՐԺԵՔՆԵՐՈՅ

Փոխառութիւն	Սէրի	35
»	»	31
»	»	23 28

ԲԱՆԿԵՏՈՒՄԵՐ

Օսմէնիէ ժէնէրալ	Անգլ. Լ.	5 10
Գըէտի ժէնէրալ	» »	8 02
Գանը տը Փարիզ	» »	5 02
Սօս. Շանտ է վալէօր	» »	4 22
Ոլժի	» »	16 09
Թրամուէյ	» »	615
Բանգի Ոթոմանոսի	» Ֆր.	90 ½
Բանգեռատ Լաուրիօմի		83

ԸՆԹԱՑԻՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	Դրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 28
Անգլիական ոսկի	»	110 25
Մարը Գերմանական ոսկի	»	107 20
Իմպերիալ	»	90
Գրիմիս	»	34 20
Բուպլ Գիպաղաք	»	9 17
Մէջ. արծաթ (տարբ.)	»	197 06
Մանր արծաթ	»	102 20
Մէջիտիէ	»	98 20
Թասգիպէ	»	— —
Տակոս Հաղանիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 22 Նոյեմբեր

Ֆրանսական Իսանդ 3 %	99 42½
» » 4½ %	105 15
Օսմանեան բոնովուտ Սէրի Դ.	21 67½
Սամ. մաքս. արժեթուղթ	470 62½
Բրիսրիմէ Թիւրք (1890)	427 50

Ա Զ Դ Ք

ԹՐԱՄՈՒԷՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կը ծանուցուի հասարակութեան թէ յառաջիկայ դեկտեմբեր 1էն (Ն. Տ.) սկսեալ, թրամուէյից երթեւեկութեան տամակներուն գիները պիտի փոխուին հետեւեալ կերպով։

Ազատ-Քարաւէն կամ Զալաթիայէն մինչեւ Օրթագիւղ։

Առաջին կարգ,	70 փղ.	փոխանակ 60ի
Երկրորդ »	50 »	» 40ի

Նոյն գիծին միւս բոլոր ճիւղերուն սակագրեալ նոյնը կը մնայ։ 1—3

Կ. Պոլիս 10|22 Նոյեմբ. 92

Կը ծանուցուի պարտաթուղթ ունեցողներուն թէ, իւրաքանչիւր պարտաթուղթը 12,50 ֆրանքնոց թիւ 21 տոկոսի կտրոնին վճարման համար պորտրոները պիտի ընդունուին ի վաւերացումն, երեքշաբթի և ուրբաթի օրերը, կէս օրէն ետք ժամն 2էն 4, յառաջիկայ դեկտ. 4 (Ն. Տ.) ուրբաթ օրէն սկսելով, և վճարումները պիտի կատարուին ընկերութեան արկղէն, ուր օրն անգամ մը։

Կ. Պոլիս 9|21 Նոյեմբ. 92 1—2

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Բ Ա Ն Ա Ր Ա Ն

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻ

Մեծագոյն 1100 նկեսներէ բաղկացեալ Պատատուեան Տպագրութիւն

Գին 45 գրուշ

Սոյն փոքրատիպ եւ սուտար թանգիրքն որ 95 զրուշի կը վաճառուէր, առ հասարակ ամէնազգայնոց եւ ի մասնաւորի բարձրագոյն կարգի ուսանողաց զերբամատչելի ընելու համար Հեղինակն այս եզակեան զոհողութիւնն ըրած է անշահաբաշխ։

Կեդրոնատեղին է Պատատուեան գրատունը, ի Կ. Պոլիս, Սուլթան-Համամ փողոց, Թիւ 14։ Կը զտնուի նաեւ գրավաճառաց քով։ 300 4—4

ՅԵՌԱԳԻՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ

ՊԵՐԼԻՆ, 22 Նոյմ.—Գերմանիոյ Երեսփ. Ժողովն այսօր բացուեցաւ։ Կայսրն իւր բացման ճառով ըսաւ թէ ինք և իւր նիզակակիցք խաղաղութեան պահպանման նախանձախնդիր են։ Ամէն Տէրութեանց հետ բարեկամական յարաբերութեանց շնորհիւ, և իւր խաղաղասէր ջանադրութեան մէջ իւր նիզակակցաց աջակցութեան բերմամբ, Գերմանիա կը յուսայ որ իւր իմաստական և տնտեսական զարգացման գործին մէջ արգելքի չպիտի բախի։

ՓԱՐԻԶ.—Բոքթօ-Նովոյէ կը հեռագրուի թէ Ֆրանսական զօրքերն առանց պատերազմի մտած են Տահոմէյի մայրաքաղաքն Ապոմէյ, ուստից Պէհանզին թագաւորը փախած էր։

—Բանտայի խնդրոյն վրայ հարցապնդումէն ետքը, Երեսփ. Ժողովն որոշից, Պ. Լուպէի հանութեամբ, խորհրդարանական քննիչ յանձնաժողովոյ մը կազմութիւնը։

ՊԵՐԼԻՆ.—Զօր. Վէրտէր, երբեմն գերման պիտուրպական կցորդ ի Փեթերսպուրգ, Նիվանիոյ զօրավարին կը յաջորդէ իբրեւ գերման դեսպան նոյն մայրաքաղաքին մէջ։

ԼՈՆԴՈՆ.—Մարտքի անգլ. դեսպան Սըր Զարլզ Իւան Սմիթ դեկտ. ամուսն Մարտքի պիտի երթայ Նորէն։

ՊՐԻՍԷԼ.—Ի Պրիւժ և ի չրէկայս իբր 15 դէպք հնտապտի։

ՓԷՇԹԱ.—Երէկ հս 2 վար. 4 մեռ։

ԻՍՄԱԵԻԼԻԱ — Նոյեմբեր 11էն մինչեւ 20 Սուէզի ջրանցէն անցնող 62 շոգենաւերուն տասնօրեայ հատոյթն եղած է 1 միլիոն 750,000 ֆրանք։

Վակտան

ՊՈՒԼՈՒՆ, 11 Նոյեմբեր

ՀԵՆԹԱՑԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՈՅՑ

3 տարի հոնտրայի վրայ	110 ½
3 » փարիզի »	22 85

ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՆՈՎՈՒՏ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Դ. Սէրի)	23 27½
Բերայի մէջ	— —
Առաւօտուն բացուեցաւ	23 27
Կէս օրին	23 27
Թանգիպանը Օսմանիէ երէկ երեկոյ	82 29
» » ժամ 5ին	— —

ՐԵՆԹԱՑԻ ԱՐԺԵՔՆԵՐՈՅ

Փոխառութիւն	Սէրի	35
»	»	31
»	»	23 28

ԲԱՆԿԵՏՈՒՄԵՐ

Օսմէնիէ ժէնէրալ	Անգլ. Լ.	5 10
Գըէտի ժէնէրալ	» »	8 02
Գանը տը Փարիզ	» »	5 02
Սօս. Շանտ է վալէօր	» »	4 22
Ոլժի	» »	16 09
Թրամուէյ	» »	615
Բանգի Ոթոմանոսի	» Ֆր.	90 ½
Բանգեռատ Լաուրիօմի		83

ԸՆԹԱՑԻՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	Դրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 28
Անգլիական ոսկի	»	110 25
Մարը Գերմանական ոսկի	»	107 20
Իմպերիալ	»	90
Գրիմիս	»	34 20
Բուպլ Գիպաղաք	»	9 17
Մէջ. արծաթ (տարբ.)	»	197 06
Մանր արծաթ	»	102 20
Մէջիտիէ	»	98 20
Թասգիպէ	»	— —
Տակոս Հաղանիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 22 Նոյեմբեր

Ֆրանսական Իսանդ 3 %	99 42½
» » 4½ %	105 15
Օսմանեան բոնովուտ Սէրի Դ.	21 67½
Սամ. մաքս. արժեթուղթ	470 62½
Բրիսրիմէ Թիւրք (1890)	427 50

ՔՈՒՐԸ՝ ՔՐՈՋ ՏԵՂ

Անցեալները ծանուցինք թէ Աթէնքի մէջ մեռեալ է Նեկտար անուն հայ կին մը ինքնասներկու տարեկան, որուն ամուսնոյն էր Անգլիացին ՃՕրՃ Ֆինլէյ, «Թայմզի Կ. Պոլսոյ Թղթակիցն 1827ին։

Արգարեւ զարմանալուն հետաքրքրութիւն մը կ՝առթէ յիշեալ հայ կնոջ ամուսնութիւնն Անգլիացիի մը հետ ասկից աւելի քան կէս դար առաջ, ամուսնութիւն՝ որ իր զուարճալի հանգամանքն ունի։

Ցիշեալ թուականին երիտասարդ Անգլիացի Թղթակիցը Պոլիս կուգայ, ուր սիրոյ սաստիկ յուզում և աչքն անպատմելի շլացում կունենայ հայ ընտանիքի մը պատկանող օրիորդ Թագուհիի հրապուրիչ գեղեցկութենէն։ Թուղթը գրիչը մէկ կողմ կը թողու և գեղանի հայուհիին ետեւէն կ՝ելլայ, որ անշուշտ գժկամակութիւն չէր ղգար այդ բանէն։ Անգլիացին ջերմապէս սիրահարուած էր։ ուստի ուղղակի կը դիմէ աղջկան ծնողքին և անոր ձեռքը կը խնդրէ։ Աւանդապահ ծնողքը, որ աղէկ տպաւորութիւն մը չէր զգացած Անգլիացիին չէկ մօրուքէն ու խաժուկ աչքերէն, բացէ ի բաց կը մերժէ իր աղուորիկ աղջիկն այդ անծանօթ օտարականին տալ։ Մերժուած Անգլիացին չի յուսահատիր։ գաղտնապէս կիմացունէ օրիորդ Թագուհիին թէ այնինչ օրը իր գոյքերն առնելով առագաստնաւորնաւը մտնէ՝ իրեն հետ փախչելու համար Պոլսէն։ Կ՝երթան թէ որոշեալ օրն երկրորդ օրիորդը չի համարձակիր իր խոստումը կատարելու։ բայց իր մեծ քոյրը։ Օր. Նեկտար, գործին գիտակ։ կը կապէ գոյքերը և նոյն օրը նաւ կ՝երթայ կը տեղաւորուի։ Երբ նաւն՝ յաջող հովով մը առագաստներն ուռեցուցած կը սուրար Մարմարայի կոհակներուն վրայէն, Անգլիացին իր սիրուհիին խուցը կը վազէ։ բայց։ Աստուծ՝ իմ, ի՞նչ տեսնէ։ իր դիմացինը Թագուհին չէր, այլ Նեկտարը։ ՃՕրՃ Ֆինլէյի արիւնը կ՝եռայ։ կը բորբոքի։ վրիսած սերի մը ազդած զայրոյթովը կը փրփրի։ բայց Նեկտար կուլայ, կը պաղատի, սրտաջարմ հեծեծումներ կ՝արձակէ, այն աստիճան որ Անգլիացին քաղաքութիւնը կ՝ելլէ, սիրտը կը մեղմանայ, կը գորովի։ և երբ նաւը Պիրէոն կը մտնէ, թեւն առնելով զայն Ակրիքան եկեղեցին կ՝առաջնորդէ, ուր կը պսակուին։ Պ. ՃՕրՃ Ֆինլէյ քանի մը տարի առաջ մեռած էր, և հիմակ ալ տիկին Նեկտար կ՝երթայ միանալ իր ամուսնոյն։

ՊՐՈՒՍԱՑԻ տիպար ազարակին համար Վեհ. Սուլթանին կողմէ շնորհեալ թաչնոց և նոյն ազարակին անասնոց մէջ հիւանդութիւն մը ծագելով մէկ քանի մահեր պատահեր են, սակայն ձեռք առնուած միջոցներու շնորհիւ այդ հիւանդութիւն բոլորովին անհետացեր է։

ՀԱՆՐՕԳՈՒՏ չինութեանց նախարարութիւնն որոշած է որ շերամաբոյծներու տրուելիք չքաղրամներու վրայ Վեհ. Սուլթան անունը փոփոխուի և պատարաստութեան ծախքն ալ մեծարուի Հանրային Պարտուց Վարչութեան կողմէ, որ կը գանձէ մեռաքսներու տասանորդի տուրքը։

ԱՐՀԵՍՏԱՆ ամենագեղեցիկ և խիստ ամուր ակռայներ գտնել։ առանց բիբի։ առանց զսպանակի և առանց արմատներն հանելու։ արտասանում և ծամողութիւն կատարեալ։ ապահով յաջողութիւն երկու դրամանումով։

Կատարեալ գոհունակութենէ ետք վճարում։ Տոքթ. Պաուի, Թիւ 374, Բերա, Մեծ փողոց, Ֆրանսական դեսպանատան դիմացը, ամէն օր ցորեկուան ժամն 9էն (Ը. Ե.) մինչեւ իրիկուան 5ը։

ՄՈՒՏԱՆԵՍ-ՊՐՈՒՍԱՑԻ երկաթուղւոյն վիճակը մօտէն քննելու պատճառով մայրաքաղաքս գրկուած է Ֆրանսայի հիւսիսային խնայողական երկաթուղեաց տնօրէն՝ ՃարտարապետՊ. Օպէ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՏՈՒՆ

Բերայի անգլիական նամակատունը նամակատուփ մը հաստատած է ի Պոլիս Յակոբեան խան։ Այդ նամակատուփ կը բացուի օրը երկու անգամ, անգլիական թղթատարին համար, ժամ 2ին և 5ին (Ը. Ե.)։ Անտարակոյս այս նամակատուփ մեծ դիւրութիւն պիտի ընծայէ Պոլսոյ վաճառականաց որոց գրասենեակներն հեռու կը գտնուին անգ։ նամակատան Պոլսոյ կողմի մասնաճիւղին, որ ի Պահչէ-Գաբու։

ԿԱՎԱՔԱ-ՍԷՐԱՑԻ ԲԱՂՆԻՔԸ

Կը ծանուցուի Բերայի հասարակութեան թէ Կալաթա-Սէրայի բաղնիքն, ամբողջովին նորոգուած ըլլալով, վերաբացուած է։ Անոյշ Ջուր, Տուշ և պանեռ՝ փափագողաց համար։ Ուրբաթ և կիրակի օրերն և ամէն գիշեր բաց է արանց համար։ մնացեալ օրերը կանանց։ Ցաճախորդաց հանգստութեան համար ամէն հոգածութիւն կ՝ընծայուի։ յոյժ կանոնաւոր սպասարկութիւն և կատարեալ մաքրութիւն։ 325 1—2

ՎԻՃԱԿԱՒԱՆՈՒԹԻՒՆ

Մեր այս օրուան չորրորդ երեսին ծանուցումներուն մէջ կը գտնուի Համպորկի հանրանաթի դրամատան Մ. Մ. Վայանթին և ընկերութեան Ազգը։ օրուն վրայ մեր ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք։ Մասնաւոր ձեռնարկի մը վրայ չի խօսուիր, այլ վիճակահանութեան մը զոր արտօնած և հրաչխաւորած է կառավարութիւնը։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վ. Մ. Քիւրջեանի ՀԱՄԱՌՕՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Ա. մասը

Աբէ-Եղբան հին Պէտէրեան։

Մարդկային սեռի բարարարութեան եւ զարգացման վերաբերեալ դէպքերու յիշատակութեամբ հանդերձ

[Աշխարհացոյց գունաւոր ծախսակ Արեւելեան հին աշխարհի]

Գին 4 գրուշ

Կեդրոնատեղին է Գ. Պալենց գրատունը։ 324 3—3

Սամանեան Երկաթուղի	89 62½
» Ռէժիի բաժնեթուղթ	367 50
Պանք Օթոման	594 37½
Քրէտի Լիոնէ	788 75
Իտալական Ռանթ 5 %	93 55
Եգիպտական միացեալ	495
Զէք Լոնտրայի վրայ	25 14
Օսմանիյէ Սամանեան բանաձիրներ	— —

ԼՈՆՏՈՆ, 22

Անգլ. բանաձիրներ	97 50
Օսմ. » Սէրի Դ.	21 37
» » » Ա.	55
» » » Բ.	31
» » » Գ.	21 ¾
Օսմ. փոխառութիւն 1871	96
Փոխառութիւն 1877 (Տէֆթանս Լոն)	92 ¾
Պանք Օթոման	13 ¾
Այտընի երկաթուղի	19 ½
Գասպայի երկաթուղի	11 ½
Եգիպտական միացեալ (իւնիֆիյէ)	98 ½
» առանձ. բրիվիլէժիէ) 1890	102 ½
Տօսմանիյա (փոխառ. Ռոչիլտ)	105
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 324

ՎԻԵՆՆԱ, 22

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	120 05
» Փարիզի »	47 67
Օսմանեան Ռէժիի բաժնեթուղթ	172 50
» Երկաթուղի	43 70

ՊԵՐԼԻՆ, 22

Օսմանեան Երկաթուղի	91 90
Օսմ. Ռէժի	192 20
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 240
» Փարիզի »	80 60

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

ԲԱՐԻԶ, 22

Ֆրանսական Ռանթ 3 %	99 40
Եգիպտական միացեալ	495
Օսմ. բանաձիրներ Սէրի Դ.	21 65
Օսմ. երկաթուղի	90 50
Օսմ. Ռէժի	366 25
Օսմ. մաս. արժեթուղթ	471 25
Բրիօրիթէ թիւրք	427 50
Պանք Օթոման	594 37½
Օսմանիյէ	— —

ԳԻՏԱԿԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄԵՏԱՔՍ

